

ՎԻՊԱԿԱՆ ՏԱՂԸ ԼԻՊԱՐԻՏ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր – միջնադարյան տաղերգություն, պատմական ողբ, վիպական տաղ, գրույց, ժողովրդական բանահյուսություն, պատկեր, հերոսական կերպար

Հովհաննես Թլկուրանցին միշտ եղել է հայ միջնադարյան բանաստեղծությունը հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն, որքան զարմանալի է, ի տարբերություն նրա սիրո քնարերգության, վիպական տաղերը անբավարար են ուսումնասիրվել ու գնահատվել: Իրականում վիպական տաղերը ևս առանձնապես կարևոր են բանաստեղծի չափածոյի ընդհանուր համակարգում, քանի որ հայ միջնադարյան պոեզիայում էպիկականությունը համեմատաբար թույլ է արտահայտվել: Թլկուրանցին միջնադարյան առաջին բանաստեղծն է, որը ստեղծել է վիպական տաղեր՝ մշակելով ժողովրդական բանահյուսությունից վերցված սյուժեներ: Դրանք այսօր ևս միջնադարյան քնարերգության առավել արժեքավոր էջերից են: Մեզ են հասել «Աշայի և Յովհաննէսի», «Գեղ մի կայր Նարեկ ասեն», «Տաղ սրբոյն Ալեքսիանոսի», «Տաղ վասն Սուրբ Յովհաննու գլխատման», «Մեկնութիւն Արարածոց» տաղերը, որոնց մեջ հառնում է զգայուն, աշխույժ, ինքնատիպ քնարերգակը՝ իրեն հատուկ գունագեղ ու թրթռուն ոճով:

Մեծատաղանդ բանաստեղծի վիպական տաղերի մեջ ամենանշանակալիցը «Տաղ քաջի Լիպարտին» հայրենասիրական ողբն է, որը, անշուշտ, այժմ էլ գեղարվեստական և պատմական արժեք ու հետաքրքրություն է ներկայացնում: Թեև սա էպիկական ստեղծագործություն է, սակայն պատմողականը այստեղ երանգավորված է պայծառ տաղերգուի մեղմ քնարականությամբ ու բացառիկ հուզականությամբ: Այս տաղը սրտալի ու մտերմիկ գրույց է, հերոսական մի հետաքրքիր ողբերգ:

«Տաղ քաջի Լիպարտին»-ը առաջին անգամ ձեռագրերից լույս աշխարհի հանեց մեր գրականության երախտավոր, մեծանուն գիտնական Ղևոնդ Ալիշանը¹: Հետագայում Ն. Ակինյանը² ներկայացրեց տաղի քննական բնա-

¹ Նախ 1868 թ. «Բազմավեպում», «Հոգևովդ սուրբ ես և ամբիծ» բանաստեղծությանն առընթեր, Ալիշանը հրատարակեց տաղի սկզբի առաջին երեք տները (1-4 և 7-8 տողերը), ապա 1885 թ. ամբողջական բնագիրը «Միսուանում», հետագայում էլ՝ «Հայապատումում»: Մակայն դեռևս անհայտ է, թե բանասերն ինչ ձեռագիր սկզբնաղբյուրներ ու հիմքեր է ունեցել:

² «Քաջն Լիպարիտ պատմութեան, տաղերու եւ գրոյցներու մէջ» // «Հանդէս ամսօրեայ», 1933, էջ 129-138):

գիրը՝ նկատի առնելով ոչ միայն Ղ. Ալիշանի հրատարակածը, այլև Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 515 ձեռագրի թերի օրինակը, որը պարունակում է միայն 33-50 տողերը: Այս նշված օրինակները հիմք ընդունելով՝ համեմատական բնագիր է հրատարակել Էմ. Պիվազյանը¹, բայց նա տաղի սկզբում կցել է, այսպես կոչված, մի նախերգանք, որը ն՝ իր ոճով, ն՝ շարադրանքով, ն՝ բովանդակությամբ XIX դարի գործ է հիշեցնում և հավանաբար պատկանում է Ղ. Ալիշանի գրչին, այլ ոչ թե Թլկուրանցու: Տաղը թերի վիճակում հրատարակել էր նաև Կ. Կոստանյանը²: Թլկուրանցու ողբի ամբողջական, քննական օրինակը կազմել է անվանի բանասեր Պ. Խաչատրյանը³: Նա վերականգնել ու շտկել է գրաքննչական պատճառներով փոխառված բառերը, ճշտել և լրացրել աղարտված ու պակասավոր մնացած տողերը՝ բացի նշված օրինակներից՝ հիմք ունենալով նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 1371 տաղարանում պահպանված՝ մինչ այդ անհայտ մի օրինակը:

Պատմական հայտնի և նշանավոր դեմք է եղել Լիպարիտը՝ Կիլիկիայի հայկական պետության վերջալույսին հայ ժողովրդի գոյատևման պայքարում նահատակված հերոսը: Պատերազմներում բազում անգամ հաղթանակած սպարապետն իր բազկի հզոր ուժով պաշտպան է կանգնել հայրենի հողին, վայելել իր ժողովրդի սերն ու վստահությունը և ընկել կովի դաշտում՝ իբրև հայրենիքի ազատության սուրբ նահատակ:

Քաջ Լիպարիտի լեզենդար կերպարն ըստ արժանվույն արտացոլվել է միջնադարյան գրականության մեջ: Մեզ են հասել «Պատմութիւն քաջ Լիպարտին» խորագրով գրույցը, ժամանակագրական մի քանի կտորներ ու ձեռագրական սակավաթիվ հիշատակարաններ: Իսկ Թլկուրանցու քնարական ողբն արդեն լրացնում և ամբողջացնում է Սսի խիզախ պաշտպան մարաջախտի՝ գրչագրերում տեղ գտած կերպարի մասին: Բանաստեղծն այստեղ ջերմորեն գովերգում է պատմական հերոսին ու կերտում մի հզոր դյուցազնի կերպար: «Տաղ քաջի Լիպարտին»-ը Լեոյի գնահատմամբ «մի փոքրիկ դյուցազներգություն է», իսկ Թլկուրանցին «հայ ժողովրդական բանաստեղծների մեջ առաջինն է և միակը, որ ժողովրդական վեպից քերթված է շինել»⁴:

Քաջ Լիպարիտը⁵ գորավարական գործունեություն է ծավալել 1360-

¹ **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 197:

² Տե՛ս **Կոստանյանց Կ.**, Յովհաննես Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892, էջ 52-56:

³ **Խաչատրյան Պ.**, Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտինը» // «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ [հասարակական գիտություններ]», 1964, թիվ 11, էջ 97-102:

⁴ Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 214:

⁵ Լիպարիտի անունն առաջին անգամ հիշատակել է Թորոս Ռուբինյանց քահանան 1361 թ. գրված մի հիշատակարանում, որից հայտնի է դառնում, որ նույն թվին Սիս քաղաքում նա ավարտել էր «Մեծին Ներսեսի վարուց պատմութիւն» երկի ընդօրինակումը: Հիշատակարա-

ական թվականներին, երբ Կիլիկիայի հայկական պետությունը սեղմված էր մի փոքր տարածքի վրա՝ ենթակա եգիպտական մամլուքների և թուրք հրոսակների անընդհատ հարձակումներին: Երկրի բոլոր կողմերից արաբ, սելջուկ ու դահրաման ասպատակներն ավերում ու ամայացնում էին հայկական տեղամասերը, թալանում ու կոտորում ժողովրդին: Լիպարիտն ամենայն հավանականությամբ սպարապետ է եղել Կոստանդին V-ի (1365-1373) թագավորության սկզբի տարիներին՝ հատկապես 1367-1369 թվականներին, երբ Միս մայրաքաղաքի վրա անընդմեջ արշավում էր մինչ այդ գրավված Տարսուսի եգիպտական ամիրա Շահարոլի Մանչակը, որի նպատակն էր վերջնականապես կործանել Կիլիկիայի հայկական պետականությունը: Ահա այդ արշավանքների մասին է գրում բանաստեղծը.

Պատերազմին չըկայր խափան,
ամէն տարի՝ տասն ու քրսան...¹:

Ըստ Կիլիկիայի ժամանակագրի², 1367 թ. մայիսին եգիպտական կուսակալ Մանչակը հավաքում է «ի Շամբուն հիծելէն քանի որ կարա, և գուրակիր թուրքմանն զամէնն, և այլ բազմում խարամնցիք»³ և մոտ տասներկու հազարանոց զորքով հարձակվում Մսի վրա: Նա փորձում է գրավել Անցմնցուկ գետակը, որի վրա կառուցված կամուրջը ռազմական շատ կարևոր նշանակություն ուներ: Բայց քաղաքի բնակչությունը կարողանում է կասեցնել նրա առաջխաղացումը: Խորամանկ զորավարը պատվիրակություն է ուղարկում Կոստանդին V-ի մոտ՝ ցանկանալով «հրաման տալոյ, եթէ գամ առաջի քաղաքին ի ֆռուճ՝ վասն տեսանելոյ զքաղաքն»⁴: Նա փորձում է հանկարծակիի բերել հայերին ու նենգորեն տիրանալ մայրաքաղաքին: Սակայն հայտնի են դառնում այդ մտադրությունները, և նրա դեմ են ելնում հայկական ողջ մարտունակ ուժերը՝ խիզախ սպարապետի առաջնորդությամբ, որը

Քան ըզՄուշեղն այլ խիստ յաղթող,
քան ըզՏըրդատ Հայոց արքայն...:

Անձնվեր զորավարը ջարդում ու հալածում է թշնամու մեծաթիվ զորքը: Նրա սրից խոցվածների թվում էր և Մանչակի «գոված տղան»: Ահա այս ճա-

նում գրված է. «... ի խնդրոյ սրբասէր, հեզ, քաղցր և խոնարհ իշխանացն՝ պարոն Լիպարտի և պարոն Վասիլի, որդուցն պարոն Թորոսի Կապնցոյն՝ սպարապետին Հայոց, ի վայելումն անձանց իւրոց...» (տե՛ս **Խաչիկյան Լ.**, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 451): Սակայն այստեղ Լիպարտիի համար զինվորական ոչ մի աստիճան չի ակնարկվում, նաև դեռևս անհայտ է, թե հիշատակարանը գրվելու ժամանակ արդյոք ապրում էր նրա հայրը՝ Թորոս իշխանը, որից հետո նա կարող էր ստանալ մարաջախտի աստիճանը:

¹ Տե՛ս «Տաղ քաջի Լիպարտին» // **Խաչատրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 99 (տաղից հետագա մեջբերումները ևս այս տպագրից են):

² Անհայտ հեղինակ, որի ժամանակագրությունը հայտնի է «Միսուանից», Ալիշանի քաղվածաբար օգտագործումով միայն (հատվածները տե՛ս «Միսուանի» հավելվածում, էջ 531-548):

³ **Խաչիկյան Լ.**, նշվ. աշխ., էջ 477:

⁴ Նույն տեղում:

կատամարտի առիթով է Լիպարիտը հիշատակվում իբրև ավագ մարա-
ջախտ¹:

Սակայն երկու տարի անց Մանչակը նորից է հարձակվում Սսի վրա՝ այս
անգամ շատ ավելի մեծաքանակ բանակով (վաթսուն հազար): Դարձյալ նրա
դեմ է դուրս գալիս Ստ քաջ պաշտպան Լիպարիտը՝ պատվիրելով Կոստան-
դին V-ին պահել Անցմնցուկի կամուրջը: Քաջաբար խիզախելով թշնամու
դեմ՝ սպարապետն անխնա կոտորում է հրոսակներին.

Յիշեաց զՔրիստոս ահեղաձայն,
կըտրեց՝ ւ անցաւ առիւծնըման.
Զհեծելն արար փախըստական
՝ ւ ի հետն երթայր ընծանըման:
Լաշկարն արար դիզան դիզան,
հանց որ արին գետեր ելան...

Բայց անհավասար կռվում զոհվում է նվիրյալ զորավարը: Թշնամին կա-
րողանում է գրավել կամուրջը, որը թագավորն անգոր էր եղել պաշտ-
պանելու: Ահա նկարագրված իրադարձություններն են, որ այնքան սրտա-
հույզ ոգով ողբում է Թլկուրանցին:

Այս վերջին անցքի համառոտ, բայց հավաստի նկարագիրը գտնվել է
Բրիտանական թանգարանում պահպանված XIV դարի հայերեն մի գրչա-
գրում, որը Թլկուրանցու տաղի արժանահավատությունը հաստատող
վավերագիր է: Այդ հետաքրքիր ձեռագրի գրիչը Լիպարիտի եղբայր Վասիլն
է. «Ի թվին ՊԺԸ (1369)-ն ի մայի [ս] ամսուս Ի(20)-ն երեկ Տարսոյ նայիպն
Շուհորէ որդին ի վերայ Սըսու: Ի շաբաթ օր կռուեցան Յուսին դիհն ու իրք մի
վզեն չկարցին այնել: Ու կերակի ի վաղուենէ եկին յԱնցմնցկին կանդարայն
հեծմնով ու հետևկով, դրին կռիւ ու խանկրեցին զքրիստոնէքն ու սպանին Ճ
(100) մարդ: Ու սպանին զպարոն Լիպարիտ՝ պարոն Թորոս ավաք մարա-
ջախտուն որդին, ու այրեցին զքաղաքն ու զդարպասն: Ու կեցաւ Գ (3) ար ու
դարձաւ ի յիր տեղն ի Տարսուս: Կու ասեն, թէ Կոստընդին թագաւոր՝ պարոն
Հեթմու որդին, եբեր զհիծելն ու տուր տուեց զպարոն Լիպարիտն ու զքա-
ղաքն տաճկին»²:

Այսինքն՝ Կոստանդին V թագավորն ասել է Լիպարիտին և հանձին նրա
տեսել գահի իր մրցորդին: Նա նույնիսկ վախ է ունեցել սպարապետից և
վտանգված տեսել իր թագն ու արքայական դիրքը: Սրա լավագույն արտա-
հայտությունը «Պատմութիւն քաջ Լիպարտին» գրույցն է. «Եւ թագաւորն
Հայոց երկեաւ ի քաջ Լիպարիտեն, զի մի գուցէ եւ զինքն սպանանէ եւ ինքն
թագաւորէ»³: Կոստանդին V-ի տագնապներն իհարկե իզուր չեն եղել, քանի

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս **Խաչատրյան Պ.**, Հովհաննէս Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտի» պատմական
ողբը // «ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 113:

³ Տե՛ս Ն. Ալիկյանի հրապարակումը «Հանդէս ամսօրեայ» հանդէսում, էջ 131:

որ ռազմավարական մեծ տաղանդով օժտված գորավարը հավանաբար շատ սիրված է եղել ժողովրդի կողմից և համարվել երկրի միակ պաշտպանն ու հույսը: Քաջ Լիպարիտը հիշեցնում է մեր էպոսի սիրված հերոսներին՝ Մեծ Մհերին, Դավթին, Փոքր Մհերին, որոնք իրենց դյուցազնական հզոր ուժով պահում էին Մասունն ու սասունցիներին:

Սակայն գահի հանդեպ սպարապետի հավակնությունները պայմանավորված են եղել ոչ միայն շատ սիրված լինելով, այլև ծագմամբ: Ու թեև վերը հիշատակված զրույցում ասված էր, թե Լիպարիտը գահ բարձրանալու ոչ մի ցանկություն չի ունեցել՝ («Այլ քաջ Լիպարիտն հոգով եւ մարմնով ոչ ունէր այնպէս վատ խորհուրդ»¹), բայց չի բացառվում և հակառակը, քանի որ որոշ հիմքեր դրա համար կան Բրիտանական թանգարանի թիվ 5458 ձեռագրում: Այս տեսակետի շուրջ ավելի հանգամանակից ուսումնասիրություն է կատարել և համոզորեն ապացուցել նշանավոր բանասեր Պ. Խաչատրյանը «Տաղ քաջի Լիպարտին»-ի քննության մեջ²: Նա գտնում է, որ այս ձեռագրի Մմբատ Գունդստաբլի Տարեգրության անանուն շարունակողի բաժնում հայկական ՉՕԷ (1308) և ՉԿ (1311) թվականների դիմաց լուսանցքում գրված լրացումը՝ «Ի սոյն ամի (այսինքն՝ 1308 թ.- Պ. Խ.) գնաց Օշին թագաւոր ի Թավրեժու դանն վասն երկրիս կարե[ա]յց, որ և ար[ար] խնամութիւն ընդ Գորգէն թագաւոր Վրաց ու այրին պոմն թուխթ առջի դանին՝ գԴաւիթ որդի Վրաց թագաւորին ի հետ տամուժէլ Ալիծին՝ փոքր քօրն Օշին թագաւորին, ու երբ գԴաւիթն ի հետն ու ի թվ[ին] ՉԿ (1311)-ն արար հարսնիք ի Զ (6)-ն յունուարն ի Տարսուս ու երես սիգդով գԿապանն իր երկրովն ու հաստատեց զպարոն Դաւիթն գունթ Կապնուն երկրին թագաւորէն, տէր Էվանէ արհիեպիսկոպոսն Սիւնեաց և պարոն Շահէնշահ աւագ մարաջախտն Վրաց, և այրին պոման, որ հայոց սահմանով կենաց, և ոչ մի բան ֆռանգութեան չլինի յիր ամէն կենդանութեանն», հիմք է տալիս հաստատելու վերը նշվածը:

Այս ենթադրությունը առիթ է տալիս նաև Կիլիկիայի պատմության քաջատեղյակ Ղ. Ալիշանի այն տեսակետը, որ Լիպարիտ «անունն անգամ անծանոթ և անսովոր է բոլոր Կյուլիկեցվոց պատմության մեջ, և սովորագոյն է վրացահայոց ու մանավանդ Ուռպելյան տոհմին մեջ»³: Լիպարիտի անվան մուտքը հայերի մեջ պայմանավորված է վրացական ազդեցությամբ և այսօր էլ վրացիների մոտ գրեթե չի հանդիպում⁴: Ուրեմն կարելի է նշել, որ Գորգէն թագավորի որդին, կնության առնելով Լևոն II-ի դստերը, Օշինից ստացել է կալվածք ու կոչում, կարգվել «գունթ Կապնուն»: Կապանցի է եղել նաև Լիպարիտի և Վասիլի հայր Թորոսը: Թերևս «վերջինս ծնված լիներ վրաց ար-

¹ Նույն տեղում:

² Տե՛ս **Խաչատրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 114-115:

³ **Ալիշան Ղ.**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ., էջ 509:

⁴ Հ. Աճառյանը նույնպես հաստատում է այդ անվան վրացական ծագում ունենալը (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հ. Բ, Երևան, 1944, էջ 430):

քայազնից ու Ալիծից և, իբրև մոր կողմից Հեթումյան դինաստիայից սերած, բարձրացվեր սպարապետության աստիճանի, քանի որ արքայական ընտանիքին արենակցությամբ կապված անձնավորություններն էին մեծ մասամբ հաստատվում կարևոր պաշտոններում»¹: Ահա այս ճանապարհով Թորոսի որդին կարող էր ստանալ վրացական Լիպարիտ անունը: Սակայն այս վարկածը հաստատող որևէ ձեռագիր ապացույց դեռևս չի հայտնաբերվել, այսինքն՝ այն, որ Դավիթն ու Ալիծը Թորոսի ծնողներն են եղել: Իսկ եթե դրա իսկությունը ճշտվի, ապա «իր լուսանցագրություններով Վասիլը շահարկել է հայկական գահի նկատմամբ Լիպարիտի իրավունքները»²:

Այստեղ հետաքրքիր է մի այլ հանգամանք ևս: Ըստ պատմագիտական գրականության մեջ եղած կարծիքներից մեկի՝ «թագավորը (այսինքն՝ Կոստանդին V-ը) չի կարողանում պահել կամուրջը, որ անցնում է թշնամու ձեռքը»³: Բայց Թլկուրանցու տաղի մեջ իրողությունն այլ կերպ է մեկնաբանված, որն ավելի հավաստի է թվում և համապատասխանում պատմական իրականությանը.

Նայ թագաւորըն չարացաւ.
գիւծեւն առին՝ ի յետ դարձան:

Այսինքն՝ պարզվում է, որ թուլամորթ Կոստանդին V-ը, որը, Ժան Դարդելի վկայությամբ, կիպրացի էր և հայոց թագավոր էր ընտրվել չափազանց հարուստ լինելու պատճառով՝ «առ փարթամութեանն»⁴, համաձայնության է գալիս Եգիպտոսի սուլթանի հետ՝ խոստանալով հանձնել նրան իր թագն ու երկիրը, միայն թե ապահովված լինի կյանքն ու հարստությունը: Եվ բուրբուլին էլ անհավանական չէ, որ 1369 թ. մայիսյան մի օր նա է դավադրաբար հրավիրել Մանչակ ամիրային և, ըստ Վասիլի, նենգորեն «տուր» տվել, հանձնել «զպարոն Լիպարիտն ու զքաղաքն տաճկին»⁵:

Իսկ արդյո՞ք Թլկուրանցին եղել է Լիպարիտի ժամանակակիցը, թե՞ այս մեծ գորավարի քաջագործությունների մասին հետագայում է լսել ականատեսներից: «Տաղ քաջի Լիպարտին»-ը դեպքերն այնքան հարազատորեն է պատկերում և լի է պատմական հավաստիության շնչով, որ բանաստեղծը Ներսես Շնորհալու պես իր նկարագրածի մասին կարող էր ասել՝ «զիրս եղելոց, մեր ժամանակս դիպելոց»: Թլկուրանցու ողբը ոչ թե հորինված է ժողովրդի մոտ արդեն ստեղծված գրույցների օգտագործում-մշակումով (Պիվազյան), այլ բանաստեղծն ինքն է ստեղծել այն իբրև ժամանակակից՝ ոգեշնչված պատմական եղելությունից: «Տաղ քաջի Լիպարտին»-ը, ինչպես Դավթակ Քերթոզի «Ողբք ի Մահն Ջեւանշիրի մեծի իշխանին» (VII դար)

¹ Խաչատրյան Պ., նշվ. աշխ., էջ 116:

² Նույն տեղում:

³ Լեո, նշվ. աշխ., էջ 214:

⁴ «Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն», Ս.- Պ., 1891, էջ 110-111:

⁵ Տե՛ս Խաչատրյան Պ., նշվ. աշխ., էջ 113:

քերթվածը, պատմական դեպքերի, իրադարձությունների անմիջական, անզամ համաժամանակյա արտացոլումն է: Իսկ այս տողերը՝

Յորտեղ նըստին հաց՝ ի սեղան
ժողովք բազում և շատ իշխան,
Յիշեն ըզնա սուրբ քահանայքն,
Կէր ողորմի ասեն նըմա,-

ցույց են տալիս, որ շատ թարմ է եղել Լիպարիտի հերոսական մահվան հիշողությունը, և անունը՝ այնքան սիրված ու ճանաչված, որ ժողովուրդը դեռևս սգի մեջ է եղել, քահանաները «Տէր ողորմի» են ասել նրան՝ իբրև նոր մահացածի: Ուրեմն տաղը պետք է գրված լինի այդ դեպքերից (1369 թ.) քիչ անց, և տաղասաց Թլկուրանցին՝ հեղինակը, ապրած XIV դարում:

«Տաղ քաջի Լիպարտին» վիպական տաղի առաջին մասում Թլկուրանցին իր՝ անձնագոհությամբ անմոռանալի հերոսի գովքն է անում, իսկ շարունակության մեջ նկարագրում կատարված դեպքերը.

Ահա Ստ պաշտպան քաջ գորավարի ներբողը.

Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,
ի ձեռն առնոյր զըռում ճօճան,
Սասաներ ազգըն թուրքանց,
դողայր ամէն Տաճիկաստան:

Քաջ ու գովված հսկա սպարապետը նման է իր հեռավոր նախորդին՝ Մուշեղին: Հիշենք Հովասափ Մեքաստացու (XVI դար) Մուշեղի մասին տաղը, ուր նույնպես անչափ գեղեցիկ երգվում են Մամիկոնյան իշխանի դյուցազնական ուժը, նրա բազում հաղթանակները և դավադիր մահը.

Միջովն ի վեր քան զամենայն,
Պարթև իզար զարագլխեան.
Է՛ր քաջասիրտ յառիձ նման,
Որ ի յահէն աշխարհ դողան¹:

Թշնամի թուրքերն անընդհատ հարձակվում են Սսի վրա, և ամեն անզամ նրանց կոտորում ու հետ է շարտում խիզախ սպարապետը: Ահա այս անզամ էլ Մանչակի բանակը նախապատրաստվում է հարձակման.

Վաթսուն հազար մարդ միաբան
զըրեհն հազան՝ ի ձին հեծան,
Ձեռուին առին զըռում ճօճան,
թուր և ասպար ու կանգնեցան:
Հարին ըզփող պատերազմին,
զպուկն ու զնաֆիրն ըզգաւ հարկան:

¹ **Հովասափ Մեքաստացի**, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1964, էջ 91:

Հակառակորդի թվական գերակշռության կրկնակի նշումով (վաթսուն հազար) բանաստեղծը, կարծես, ցանկանում է ավելի ընդգծել թշնամու սպառնալիքի ահավորությունը, իսկ զինահանդերձավորման ու ռազմավորների հնչման նկարագրով էլ ավելի դրամատիկ դարձնել մարտական դիպվածի տեսարանը: Մեծաքանակ թուրքերը բոլոր կողմերից պաշարել են քաղաքը, սակայն չեն համարձակվում անմիջապես ներխուժել, որովհետև ստեցիների հետ է քաջ սպարապետը, որին հույսով ու հավատով ապավինել է տագնապած ժողովուրդը: Իսկ թուլամորթ արքան, քենը սրտում պահած (քանի որ ինքն էր առիթ տվել Մանչակի հարձակմանը, ինչպես վերը նշվեց), մարտի է հրավիրում նրան՝ ուղարկելով ստույգ մահվան.

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.

Քա՛ջ Լիպարիտ, մե՛ծ զօրական

Հեծելըս քեզ համար եկան

մինչ յայս տեղիս, ուր կանգնեցան:

Քաջ Լիպարիտը թեև կանխագգում է, որ կռիվն այս անգամ օրհասական է լինելու, թամբում է իր ձին, զինավառվում.

Քաղցրիկ ետուր պատասխանի,

թէ «Ես՝ քաղքիս չարին փոխան,

Բայց չէ պատեհ զըրուց առնել,

թէպէտ հասաւ ինձ օր մահուան»:

Եվ խնդրում է նա թագավորին «հաստատ՝ ւ ամուր պահէ զկարմունճն», այսինքն՝ հայոց զորքերի հետադարձի ճանապարհը: Ողբում հատկապես անմոռաց է հարազատներից Լիպարիտի բաժանվելու սրտառուչ պահը, որ պատկերված է շատ մեծ վարպետությամբ.

Հառչեաց, զորդեակըն համբուրեաց,

հանց որ զհեծելն ի լաց եհան.

Ասաց. Որդեա՛կ իմ Յովհաննէս,

Վասիլ եղբա՛յր իմ սիրական,

Փառօք տիկի՛ն դու Մանանայ,

իշխանուհի՛ արևնըման,

Հայեա՛ց պատկերս ի մանկութեան,

որ տի մըտնում ի հող տապան:

Հրաժեշտի այս գեղեցիկ և անկրկնելի պատկերը որքա՛ն հարազատ է մեր էպոսի սիրված հերոսներից մեկի՝ Սասունցի Դավթի հրաժեշտին՝ կռիվ գնալուց առաջ.

Իմ քուրե՛ր, մերե՛ր, իմ լա՛վ դրկիցներ,

Մնացե՛ք բարով...¹

¹ «Սասունցի Դավթ», Երևան, 1981, էջ 225:

Օրհնելով Աստծո անունն ու երկրպագելով Սուրբ Քրիստոսին՝ սպարապետն անվախ դուրս է գալիս թշնամու դեմ: Չափազանց հետաքրքիր ու պատկերավոր է ճակատամարտի տեսարանը: Քաջ Լիպարիտին, ինչպես Դավիթը,

Յիշեաց զՔրիստոս ահեղաձայն,
կըտրեց՝ ւ անցաւ առիւծնւման.
Ձեռեւն արար փախըստական
՝ ւ ի հետն երթայր ընծանւման:
Լաշկարն արար դիզան դիզան,
հանց որ արին գետեր ելան:

Եվ թվում է, թե հաղթանակն արդեն լիարժեք է, բայց հզոր գորավարի չակնկալվող այդ հաջողությունից նեղսրտած Կոստանդին V-ը թշնամուն է զիջում իրեն վստահված կամուրջը.

Նայ թագաւորըն չարացաւ.
զհեծելն առին՝ ւ ի յետ դարձան:
Թուրքանց հեծելն յառաջ եկին,
զկարմունճեն առին ու կանգնեցան:

Անհավասար մարտից հոգնած ու հաղթանակած հերոսը վերադառնում է Միս, բայց հանկարծ կամրջի մոտ անսպասելիորեն շրջապատվում է դարանակալ թուրքերով, որոնք.

Ըռումք դրբին ամէն դիհացն,
շատ խոցեին զյաղթող վըկայն.
Հայեր ողորմ յաջ և ի ձախ՝
գոչ ոք գըտաւ իւր օգնական:

Եվ մեր պատմության մեջ հայտնի շատ հերոսների նման նենգ դավադրության զոհ է դառնում Ստո խիզախ պաշտպան քաջ Լիպարիտը: Միրելի սպարապետին դրվատելով՝ բանաստեղծն ընդգծում է նրա անփոխարինելի դերը հայրենիքի պաշտպանության գործում, որովհետև նրանից հետո թշնամին անգթորեն կոտորում է ժողովրդին, ավերում եկեղեցիներն ու վանքերը, սպանում, գերեվարում երեցներին ու սարկավագներին: Եվ ողջ երկիրն ընկնում է թշնամու դաժան լծի տակ:

Թերևս մեր էպոսից որոշ մոտիվներ միահյուսվել են հետագայում ստեղծված քաջ Լիպարտի գրուցապատումին: Ըստ այս վերջինի, երբ սպարապետի գլուխը տանում են Մըսըր՝ եգիպտական սուլթանին, վերջինս խիստ ապշում է. «Եթե ընդէ՞ր ոչ բերեիք զնա կենդանի առ իս, զի կին տայի նմա, որ աճեր եւ թագաւոր անէի, ընդդէմ թշնամեաց իմոց կեցուցանէի զնա որպէս պարիսպ»¹: Հիշենք, որ նույն նպատակով «Մասնա ծռեր» էպոսում Մսրա Մելիքը Մեծ Միերին կենակցել է տալիս իր կնոջ հետ, որպեսզի «իդոր

¹ Տե՛ս Ակիմյան Ն., նշվ. աշխ., էջ 133:

ջընսեն» իրենց «ազկի մեչ ընկնի»¹: Նրանց հարազատ է դարձնում նաև այն, որ Լիպարիտը նույնպես օժտված է անօրինակ, հզոր ուժով և Մեծ Միերի, Դավթի, Փոքր Միերի ու մյուս հերոսների նման հանդես է գալիս իբրև իր քաղաքի ու ժողովրդի միակ պաշտպան:

«Տաղ քաջի Լիպարտին»-ը հիշեցնում է միջնադարյան վիպական երգերից մեկը՝ «Լևոնի երգը» կամ «Ի Լեոն որդի Հեթմոյ» գործը², որը ստեղծվել է հավանաբար XIII դարի երրորդ քառորդում և այն ժամանակ էլ գրի առնվել: Այն նույնպես վիպական քնարական մի երգ է՝ ստեղծված պատմական իրողության վրա, հորինման ժամանակի ոգով: Իր անձնագոհությամբ, հայրենիքին նվիրումով քաջ Լիպարիտը նման է Լևոնին, որը չի տարվում եգիպտական սուլթանի խոստումներով ու դավադիր փայփայանքներով, չի կրոնափոխվում՝ հավատարիմ մնալով իր սուրբ հավատին:

Խիզախ սպարապետ Լիպարիտը եղել է բանաստեղծի երազած կատարյալն ու լավը, կրել այն մեծ սերը, որը հայրենի երկրի անկախության ու ազատության համար զոհավարին մղել է անձնուրաց հերոսության ու նահատակության:

Նշանավոր բանասեր Ն. Ալիսյանը Լիպարիտի հետ նահատակվող Սիր Յոհանին նույնացրել է հերոսի որդի Հովհաննեսի հետ³: Սակայն այդ նույնացումը հավանական չի թվում, որովհետև Լիպարիտի որդին այն ժամանակ դեռևս փոքրիկ երեխա է եղել: Կովից առաջ հայրը նրան հրաժեշտ է տալիս այսպես.

Հառաչեաց, զորդեակըն համբուրեաց,
հանց որ զհեծելն ի լաց եհան:

Նա Լիպարիտի հետ չի սպանվել, նույնիսկ բավական ուշ՝ 1466 թ., դեռ կենդանի է եղել: Դա ապացուցվում է Ն. եպ. Ծովականի հայտնաբերած ձեռագրական մի հիշատակարան-հատվածով, որը դժբախտաբար կրճատված է: Ծովականը գրում է, որ «Սրուանձտեանցի Թորոս Աղբարի Բ. հատորին մեջ Չնքուշի Սիրահայեաց Ս. Աստուածածնի վանքի ձեռագիրներուն կարգին կայ Ճաշու Գրքի մը յիշատակարանը, դժբախտաբար կրճատուած, ասպէս. «...Գրեալ թվ. ԶԺԵ (=1466) ձեռամբ երկու գրչաց Յակոբ Քահանայի և Պաւղոս Սարկաւագի, ի Խարբերդ քաղաքի, ի թաղն Սինամուտ, ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի եւ եպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի, և ի ամիրայութեան Հասան Խանի, ի խնդրոյ Տէր Յոհ. եպիսկոպոսին, ընդ հովանեաւ Ս. Սարգսի զաւրավարին ... ի յիշատակ իւր եւ ծնողացն Լիպարտին

¹ «Մասնա ծոեր», հ. Բ., մաս 1, Երևան, 1944, էջ 269 (ասացող՝ Մանուկ Թորոսյան):

² Տե՛ս **Մնացականյան Ա.**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 231:

³ Տե՛ս **Ալիսյան Ն.**, նշվ. աշխ., էջ 135:

եւ Մանանային...»¹: Ահա այս Լիպարիտի և Մանանայի որդի Հովհաննես եպիսկոպոսը, թվում է, Թլկուրանցու տաղում նշված համանուն «որդեակն» է, քանի որ և՛ Լիպարիտ, և՛ Մանանա անունները գրեթե եզակի են մնում մեր պատմության մեջ:

Ն. Ակինյանը ձեռագրերում գտել ու հրապարակել է նաև Լիպարիտի քրոջ մասին գրույցը՝ «Քոյրն Քաջին Լիպարտի ըմբշամարտ»² խորագրով, թե ինչպես Լիպարիտի քույրն ըմբշամարտում է «խամայելացի» մի փահլևանի հետ ու հաղթում և որպես պարգև պահանջում այնքան բամբակ, որքան որ կարողանա շալակել: Մակայն երբ տուն է հասնում և բաց անում բամբակը, «նայ ետես, որ եղեալ էր ի մեջ բամբակին քարս, որ կայր քառասուն լիտր»³: Թագավորը խաբել էր Լիպարիտի քրոջը և Մարա ըմբիշին հաղթելու դեպքում խոստացած բամբակի մեջ դրել քառասուն լիտրանոց քար⁴:

«Տաղ քաջի Լիպարտին»-ը հարուստ է պատկեր-համեմատություններով, որոնք շատ տպավորիչ են, հուզական ու ինքնատիպ: Ահա այդպիսի յուրօրինակ պատկերներ են հետևյալ տողերը.

Զերթ սուրբ Սարգիս քաջն ի նըման,
ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,
Քան ըզՄուշեղն այլ խիստ յաղթող,
քան ըզՏրդատ Հայոց արքայն:

Կամ՝

Արիւն հանէր գերթ գետ Ջիհան:

«Հանց որ արիւն՝ գետեր ելան», - գրում է բանաստեղծը, և կենսատու Ջահան գետի հետ միասին ավելի է ամբողջանում քաջ Լիպարիտի հերոսական նկարագիրը, ավելի են ընդգծվում նրա անօրինակ քաջագործությունները: Շատ բնորոշ են չարությամբ համակված եգիպտացիներին բնութագրող տողերը՝ Զերթ քացխով տիկ չարեօք լըցան:

Առավել ցայտուն և հաջողված է, թերևս, հետևյալ պատկերը.

Այն անօրէն չար կենդանին,
որ են նոքա մահմետական,
Եւ ի յահէն քաջ Լիպարտին
զինչ զուր դողան՝ ու առաջ չի գան:

¹ (Խեւ) Յովհաննես Թլկուրանցի, Տաղագիրք, հրատ. Օովական Ն. եպ., Երուսաղեմ, 1958, էջ ԺԲ:

² Ակինյան Ն., նշվ. աշխ., էջ 133-134:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 134:

⁴ Տե՛ս նույն տեղում: Ի դեպ, քարի իմաստն այլ կերպ է բացատրել բանասեր Գ. Աբգարյանը, որը «Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր» գրքի գրախոսությունում գրել է. «Հայ մատենագրության մեջ քար բառը, բացի սովորական քարից, ունի նաև անգին քարի իմաստ, և Լիպարիտի գրույցում խոսքը վերաբերում է անգին քարին: Թագավորը, աղջկա հզորությամբ հիացած, բամբակի պարկի մեջ 40 լիտրանոց անգին քար է դնում» (տե՛ս «Տեղեկագիր», 1961, թիվ 3, էջ 97):

«Տաղ քաջի Լիպարտին-ը» ժողովրդի հոգում ազատագրական կռվի գաղափարը բորբոքող գեղեցիկ ու սրտահույզ մի գործ է, անմահացնող հիշատակն այն քաջ նահատակի, որը «պատմության մեջ փայլակի մը պես կերևի և կանցնի, բայց... պայծառ և բարեբախտ փայլակի մը պես» (Ղ. Ալիշան): Քաջ Լիպարտի վսեմ, հայրենասեր և տիրասեր հոգու վառ նկարագիրը, նրա նահատակման սրտաճմլիկ պատկեր սուգը, Ստո ավերումի և ընդհանուր ժողովրդական սիրված հերոսի մահվան առթիվ, իրոք որ «պատկերներ են կտաւի վրայ առնուած թարմ գոյներով»¹:

Вардан Егиазарян – Эпическая песнь о полководце Липарите

Полководец Липарит является одним из известных деятелей последнего периода истории Киликийского армянского государства, павшим в борьбе армянского народа за свою независимость против египетского султаната. Подвиг и трагическая гибель этого легендарного героя воспеты в “Песни о храбром Липарите” выдающегося армянского поэта Ованеса Тлкуранци. “Песнь” представляет собой плач в стихах и имеет определенную художественную и историческую ценность.

Vardan Eghiazaryan – The Epic Verse about General Liparit

General Liparit was one the famous figures in the last period of the Cilician Armenian state. He fell victim in the battle for Armenian independence against the Sultanate of Egypt. The feat and tragic death of this legendary hero are praised in the work “Verse devoted to brave Liparit” by the famous Armenian medieval writer Hovhannes Tlkurantsi. “The verse” is a poetical tragedy and has specific artistic and historical value.

¹ Ալիւսան Ն., նշվ. աշխ, էջ 135: